

ՀԱՅԵՐԵՆ ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶԿԻ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ



Co-funded by
the European Union



BUDJAN

WINNET
GORIS

YCCD
YOUTH COOPERATION CENTER OF DILJAN





Co-funded by
the European Union



"AGATE"
RIGHTS DEFENSE CENTER
FOR WOMEN WITH DISABILITIES



«STRIVE» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այն իրականացնում է ՆԵՖ Բելգիան (NEF Belgium)՝ համագործակցությամբ չորս գործընկեր կազմակերպությունների.

- **«ԱԳԱԹ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՅԿ,**
- **«ԲԼԵՉԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՅԿ,**
- **«ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ,**
- **«Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՅԿ:**

Այս կանոնագիրը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ջայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հայաստանի Խուլերի Միավորում

ՀԱՅԵՐԵՆ ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶԿԻ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հայաստանի Խուլերի միավորումը (այսուհետ՝ ՀԽՄ)

Գիտակցելով, որ Հայաստանի Խուլերի համայնքը ներկայացնում է մշակութային և լեզվական խումբ, որն ունի լիարժեք և հավասար հաղորդակցության և հասարակական կյանքի բոլոր ոլորտներին մասնակցելու անօտարելի իրավունք,

Նկատի առնելով, որ հայերեն ժեստերի լեզվով թարգմանչական որակյալ ծառայությունների մատուցումը նպաստում է խուլ համայնքի բարեկեցությանն ու մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից լիարժեքորեն օգտվելուն, ինչպես նաև ամրապնդում է հասարակության լիարժեք անդամ լինելու զգացումը և հանգեցնում է հասարակության մեջ նշանակալից առաջընթացին և աղքատության հաղթահարմանը,

Գիտակցելով, որ ՀԽՄ անդամները պետք է ունենան հայերեն ժեստերի լեզվով բարձրորակ թարգմանչական ծառայությունների հասանելիություն,

Համոզված լինելով, որ Էթիկական սկզբունքների համապարփակ կանոնագիրը, որի նպատակը կլինի օժանդակել հայերեն ժեստերի լեզվի թարգմանիչների մասնագիտական գործունեությանը, ՀԽՄ անդամների իրավունքների ապահովմանը, ժամանակի ընթացքում լրամշակվելով կարևոր ներդրում կունենա ՀԽՄ կողմից թարգմանչական ծառայությունների մատուցման որակի ապահովման գործում,

Արձանագրելով, որ հնարավոր չէ թարգմանչական բոլոր իրավիճակների համար սահմանել միասնական կանոններ, սակայն հնարավոր է պահպանել թարգմանչի մասնագիտական համընդհանուր չափանիշները,

հաստատում է հայերեն ժեստերի լեզվի թարգմանիչների Էթիկական սկզբունքների կանոնագիրը (այսուհետ՝ Կանոնագիր):

I. Ընդհանուր դրույթներ

1. Կանոնագրի դրույթները տարածվում են ՀԽՄ կողմից հավաստագրված թարգմանիչների, ՀԽՄ-ում աշխատող կամ ՀԽՄ-ին ծառայություն մատուցող թարգմանիչների, փորձնակների և սովորողների նկատմամբ:

2. Կանոնագրի դրույթները տարածվում են ՀԽՄ կողմից հավաստագրված թարգմանիչների, ՀԽՄ-ում աշխատող կամ ՀԽՄ-ին ծառայություն մատուցող թարգմանիչների, փորձնակների և սովորողների նկատմամբ:
3. Այն դեպքերում, երբ հակասություն կա Կանոնագրի և միջազգային կամ ներպետական օրենսդրության միջև, թարգմանիչը ենթարկվում է օրենքի գերակայությանը, իսկ ՀՀ Օրենքի և միջազգային օրենքի միջև հակասության դեպքում՝ միջազգային օրենքին:
4. Կանոնագիրը կիրառվում է ինչպես առերես (դեմառդեմ), այնպես էլ հեռավար (տեսազանգի) միջոցով իրականացվող թարգմանությունների դեպքում:

II. Սահմանումներ

1. Սույն կանոնագրում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

Գործընկերներ - ժեստերի լեզվի այլ թարգմանիչներ, ներառյալ միազգային ժեստերի լեզվի թարգմանիչներ

Շահերի բախում - Թարգմանչի մասնագիտական պարտականությունների և մասնավոր շահերի թվացյալ կամ իրական անհամատեղելիություն, երբ թարգմանիչն ունի մասնավոր կարգավիճակից բխող շահեր, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ մասնագիտական պարտականությունների և գործառույթների վրա: Աշխատանքային պայմանագրով նախատեսված ցանկացած նորմերի խախտումը համարվում է անթույլատրելի, հիմք է հանդիսանում աշխատանքից հեռացման:

Օգտվողներ - Անձինք, որոնք օգտվում են ժեստերի լեզվի թարգմանչական ծառայությունից, ներառյալ խուլ, խուլ ու կուլյր, թույլ լսող և լսող անձինք:

Սուլաբերվիզիա - Սուլաբերվիզիայից օգտվող թարգմանչի և խորհրդատու թարգմանչի (սուլաբերվիզորի) միջև համագործակցություն, որի միջոցով ապահովվում է մասնագիտական գիտելիքների, փորձի և էթիկական նորմերի վրա հիմնված պրակտիկ գործունեության արդյունավետությունը.

III. Հիմնական սկզբունքներ

1. Կանոնագրի հիմնական սկզբունքներն են՝

Սկզբունք 1 - Գաղտնիության սկզբունք

Հիմնական սկզբունք - Թարգմանիչները պահպանում են հաղորդակցության բովանդակության գաղտնիության պահանջները:

Թարգմանիչները վստահության դիրք են զբաղեցնում իրենց՝ որպես հաղորդակցության լեզվական և մշակութային օժանդակողների դերում: Գաղտնիությունը չափազանց կարևոր է գնահատվում օգտվողների կողմից և կարևոր է բոլոր ներգրավված անձանց իրավունքները հարգելու և պաշտպանելու տեսանկյունից:

Յուրաքանչյուր իրավիճակ (օրինակ՝ կրթական, իրավական, բժշկական, ֆինանսական) ունի գաղտնիության ապահովման իր չափանիշը: Պրոֆեսիոնալ թարգմանիչները պետք է իմանան գաղտնիության տարբեր մակարդակների ընդհանուր պահանջները և դրանց կիրառելիությունը: Գաղտնիության չափանիշներից բացառությունները ներառում են, օրինակ, երբ օրենսդրությունը պահանջում է հայտնել նախապատրաստվող ծանր հանցագործության մասին: Պահպանել գաղտնիության բոլոր չափանիշները, որոնք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրության, միևնույն ժամանակ չեն խախտում անձի տվյալների գաղտնիության ապահովությունը:

Թարգմանիչը՝

1. պահպանում է իր գործունեության ընթացքում իրեն վստահված կամ հայտնի դարձած անձնական տվյալների գաղտնիությունը և դրանք հայտնում է «ըստ անհրաժեշտության», օրինակ՝ անմիջական ղեկավարին՝ ծառայության մատուցման վերաբերյալ հավաստում ներկայացնելու նպատակով.
2. ոչնչացնում կամ ապանձնավորում է անձնական տվյալները, երբ տվյալները պահպանելն այլևս անհրաժեշտ չէ օգտվողին ծառայություն մատուցելու կամ մատուցումը հավաստելու նպատակով, օրինակ՝ ոչնչացնելով (ջնջելով նամակագրությունները, մանրացնելով թղթերը) գրառումները:
3. տեղեկացնում է օգտվողին, որ թարգմանչական ծառայության մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած որոշ տեղեկություններ կարող է պարտավորված լինել հայտնելու իրավապահ մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սկզբունք 2 - Պրոֆեսիոնալիզմ

Հիմնական սկզբունք - Թարգմանիչները տիրապետում են մասնագիտական հմտություններին և գիտելիքներին, որոնք անհրաժեշտ են տարբեր իրավիճակներում աշխատելու համար:

Ակնկալվում է, որ թարգմանիչները կհետեն լեզվի և մասնագիտական զարգացումներին, ինչպես նաև ՀԽՄ զարգացող մոտեցումներին:

Թարգմանիչները ծառայությունները մատուցում են խելամտությամբ առաջնորդվելով՝ հաշվի առնելով իրենց հմտությունները, ներկայացվող պահանջները և օգտվողների կարիքները:

Թարգմանիչները տիրապետում են խոլերի հայկական մշակույթին և հարգում են այն:

Թարգմանիչը՝

1. մատուցում է ծառայություններն՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, ազգային պատկանելությունից, սեռից, կրոնից, տարիքից, ֆիզիկական կամ հոգեկան առողջության վիճակից, սեռական կողմնորոշումից կամ որևէ այլ գործոնից,
2. գնահատում է օգտվողի կարիքները, լեզվական նախընտրությունները՝ ծառայության մատուցումից առաջ և ընթացքում կատարելով ճշգրտումներ,
3. հարգում և օգտագործում են հաղորդակցության հատուկ ձևերը, որոնք նախընտրում են ծառայությունից օգտվողները,
4. պատշաճ կերպով թարգմանում է՝ փոխանցելով հաղորդվող ինֆորմացիայի հիմնական բովանդակությունն ու ոգին, օգտագործելով օգտվողի կողմից հասկանալի լեզու, զգուշորեն և արագ շտկելով թույլ տրված սխալները,
5. թարգմանչական ծառայությունները մատուցում է չեզոք և անաչառ՝ տուրք չտալով իր քաղաքական, կրոնական, բարոյական կամ գաղափարական մյուս դիրքորոշումներին,
6. եթե նախապես տեղյակ է, որ չի կարող անաչառ մնալ թեմայի վերաբերյալ կամ թարգմանվող կամ ծառայությունից օգտվող անձանց նկատմամբ, հրաժարվում է ընդունել առաջարկը (հանձնարարությունը),
7. խնդրում է աջակցություն (օրինակ՝ խոլ անձանցից, թարգմանչական թիմի անդամներից), երբ անհրաժեշտ է բովանդակությունն ամբողջությամբ փոխանցելու կամ հաղորդակցման բացառիկ մարտահրավերները լուծելու համար (օրինակ՝ մտավոր խնդիրների առկայության, օտար ժեստերի լեզվով հաղորդակցվելու կամ լեզվի իմացության բացակայության պարագայում),
8. գերծ է մնում խորհուրդներ կամ անձնական կարծիք հայտնելուց,
9. օգտվողի կողմից ցանկություն հայտնելու դեպքում տրամադրում է տեղեկություններ կամ ուղղորդում է մարդկանց Հայաստանի խոլերի միավորում կամ իր գործընկեր կազմակերպություններ՝ ստանալու անհրաժեշտ ծառայությունները,
10. հանդես չի գալիս որպես օգնական կամ ներկայացուցիչ (լիազոր անձ) օգտվողների համար. թարգմանիչը չի հանդիսանում փաստաբան, իրավական խորհրդատու կամ սոցաշխատող,
11. Թարգմանիչը պետք է գնահատի իրավիճակը, շահառուի խնդիրը և խելամտորեն հրաժարվի թարգմանության ապահովումից եթե իր, որպես այդ ոլորտի թարգմանիչ որակավորումը չի համապատասխանում:

Սկզբունք 3 – Վարվելակերպ

Յիմնական սկզբունք - Թարգմանիչները վարվում են այնպես, ինչպես խելամիտ և թարգմանության կոնկրետ իրավիճակում:

Թարգմանիչներից ակնկալվում է, որ կունենան իրավիճակին պատշաճ կեցվածք և արտաքին տեսք: Յաշվի առնելով թարգմանչի գործունեության ոլորտը և ամեն պահ բացահայտ հանրության մեջ երևալու անհրաժեշտությունը, թարգմանիչը բոլոր իրավիճակներում պետք է ունենա համապատասխան կեցվածք և հագուստ: Խորհուրդ է տրվում միատոն մուգ գույներով հագուստ՝ սև, կապույտ, շագանակագույն, մանուշակագույն, կանաչ: Յագուստի թևքերը չպետք է լինեն շատ երկար և լայն, խորհուրդ չի տրվում շատ քանակությամբ զարդեր, կոճակներ, շրթների կի մզությունը և անփայլ շրթներկը ավելի են ընդգծում շուրթերի շարժումները և օգնող միջոց են թույլ լսող անձանց համար:

Թարգմանիչները պետք է խուսափեն թարգմանչական գործունեությանը հակասող դերեր ստանձնելուց և շահերի բախումից (թվացյալ կամ իրական):

Թարգմանիչը՝

1. խորհրդակցում է համապատասխան անձանց (օրինակ՝ կազմակերպիչների) հետ՝ որոշելու այնպիսի հարցեր, ինչպիսիք են իր տեղակայումը (օրինակ՝ որպեսզի տեսողական կապ ունենա օգտվողների հետ, ետնապատկերը պարզ լինի) և փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են արդյունավետ թարգմանության համար,
2. մերժում է ծառայության մատուցումը, երբ չի կարող ֆիզիկական կամ էմոցիոնալ գործոնների պատճառով կատարել այն օրինակ եթե կոնտենտը հանդիսանում է թարգմանչի ընտանիքի անդամը, մոտ ընկերը, աշխատակիցը, քանի որ դա ազդում է թարգմանության օբյեկտիվությանը հատկապես իրավական ոլորտի հետ կապված,
3. խուսափում է այդ կամ այլ միջավայրերում երկակի կամ հակասական դերեր կատարելուց, օրինակ՝ հանդես գալով և՛ որպես մասնակից, և՛ որպես թարգմանիչ,
4. հետևում է աշխատավայրում հաստատված վարքագծի կանոններին, տեղեկացնում է համապատասխան պատասխանատուներին, եթե հակասություն կա Կանոնագրի հետ և առաջարկում է լուծումներ,
5. ցուցաբերում է բնական (ավելորդ ուշադրություն չգրավող) վարքագիծ և զգույշ է հագուստի ընտրության հարցում,
6. պարտականությունները կատարելուց առաջ կամ ընթացքում գերծ է մտում հալուցիկնոգեն (միտքը փոխող) նյութերի օգտագործումից,
7. ներգրավված կողմերին բացահայտ կերպով տեղեկացնում է ցանկացած իրական կամ ենթադրյալ շահերի բախման մասին,
8. խուսափում է շահերի իրական կամ ենթադրյալ բախումներից, որոնք կարող են վնաս պատճառել կամ խանգարել թարգմանչական ծառայությունների արդյունավետությանը,

9. գերծ է մնում իրեն հասանելի դարձած գաղտնի տեղեկությունները անձնական, դրամական կամ մասնագիտական շահի համար օգտագործելուց,
10. գերծ է մնում իրեն հասանելի դարձած գաղտնի տեղեկություններն ի շահ որևէ կազմակերպության օգտագործելուց:

Սկզբունք 4 - Օգտվողների նկատմամբ հարգանքը

Հիմնական սկզբունք - Թարգմանիչները հարգանք են ցուցաբերում օգտվողների նկատմամբ:

Ակնկալվում է, որ թարգմանիչները կհարգեն օգտվողների նախապատվությունները, այդ թվում՝ թարգմանիչների ընտրության հարցում՝ միաժամանակ իրապես գիտակցելով պահանջները և իրավիճակը:

Թարգմանիչը՝

1. հաշվի է առնում օգտվողների՝ լեզվական նախապատվությունների վերաբերյալ խնդրանքները կամ կարիքները և համապատասխանաբար մատուցում է հիմնական բովանդակությունը (ժեստերով կամ մատնախոսությամբ). Այսինքն ժեստից խոսք և խոսքից ժեստ մատչելի և համաժամանակյա թարգմանության ապահովում համապատասխան իրավիճակում,
2. Թրգմանիչը պետք է ընտրի տվյալ իրավիճակին համապատասխան թարգմանության մոդել բառացի կամ իմաստաբանական թարգմանություն և խառը թարգմանություն,
3. օգտվողների հետ պահպանում է պրոֆեսիոնալ հարաբերություններ և գիտակցում է մասնագիտական և սոցիալական հարաբերությունների տարբերությունը,
4. ստանում է օգտվողի համաձայնությունը նախքան այլ անձանց (օրինակ՝ սովորողներ, փորձնակներ, ուղեկցող անձինք) թարգմանության վայրում ներկայությունը ապահովելը կամ թույլ տալը,
5. գիտակցում է, որ օգտվողը կարող է ծառայություններից օգտվելիս նախապատվություն տալ այլ թարգմանիչ՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ,
6. խթանում է հաղորդակցության հասանելիությունը և մատչելիությունը, ինչպես նաև աջակցում է օգտվողների անկախությանը:

Սկզբունք 5 - Գործընկերների նկատմամբ հարգանք

Հիմնական սկզբունք - Թարգմանիչները հարգանք են ցուցաբերում գործընկերների, փորձնակների և սովորողների նկատմամբ:

Ակնկալվում է, որ թարգմանիչները կհամագործակցեն գործընկերների հետ՝ խթանելու արդյունավետ թարգմանչական ծառայությունների մատուցումը: Նրանք նաև հասկանում են, որ այնպես, ինչպես նրանք առնչվում են գործընկերների հետ, անդրադառնում է ընդհանրապես մասնագիտության հեղինակության վրա:

Թարգմանիչը՝

1. պահպանում է քաղաքավարության կանոնները գործընկերների, փորձնակների և սովորողների նկատմամբ,
2. համագործակցում է ՀԽՄ թիմի և գործընկերների հետ՝ խորհրդակցելով, տրամադրելով մասնագիտական և քաղաքավարի օգնություն, երբ նրանք հայցում են,
3. մեկուսի պայմաններում քննարկում է գործընկերների հետ Կանոնակարգի խախտումները և փորձում է լուծումներ գտնել, և բարձրաձայնում է այդ մասին ՀԽՄ շրջանակներում միայն այն բանից հետո, երբ նման փորձերը անհաջող են եղել կամ ավելի են լարել իրավիճակը,
4. աջակցում և խրախուսում է գործընկերներին՝ կիսվելով տեղեկություններ լեզվի և մասնագիտական զարգացումների, կրթական նոր հնարավորությունների վերաբերյալ,
5. Թարգմանիչը պարտավոր է կատարելագործել իր գիտելիքներն ու հմտությունները զուգահեռ օգտագործելով ժամանակակից կրթական և գործնական ռեսուրսները,
6. Թարգմանիչը պետք է պահպանի իր որակավորման բարձր մակարդակը ինքնակրթվելով և վերապատրաստման դասընթացների միջոցով:

Սկզբունք 6 - Գործարար Էթիկա

Հիմնական սկզբունք - Թարգմանիչները պահպանում են գործարար էթիկայի կանոնները:

Թարգմանիչներից ակնկալվում է, որ իրենց աշխատանքները կկազմակերպեն պրոֆեսիոնալ կերպով՝ լինի դա մասնավոր, պետական, թե՛ հասարակական կազմակերպության հետ աշխատանքի շրջանակներում:

Պրոֆեսիոնալ թարգմանիչները արժանապատիվ վարձատրության իրավունք ունեն՝ ելնելով իրենց որակավորումից և փորձից:

Թարգմանիչներն ունեն նաև աշխատանքային բարենպաստ իրավունք, որոնք նպաստում են ծառայությունների արդյունավետ մատուցմանը:

Թարգմանիչը՝

1. ճշգրիտ ներկայացնում է իր որակավորումները, ինչպիսիք են սերտիֆիկատը, կրթությունը և փորձը, և տրամադրում է համապատասխան փաստաթղթեր, երբ պահանջում են,
2. գերծ է մնում գործընկերների հետ անբարեխիղճ մրցակցությունից, ներառյալ համեմատությամբ իրականացվող գովազդից, դիտավորյալ գնիջեցումից կամ վճարների արհեստականորեն ուռճացումից այն ժամանակ, երբ շուկայի պահանջարկը գերազանցում է առաջարկը,
3. սոցիալական ցանցերում բովանդակություն տարածելիս հաշվի է առնում Կանոնագրի սկզբունքները և գերծ է մնում այնպիսի գրառումներ տարածելուց, որոնք կարող են կասկածի տակ դնել մասնագիտական օբյեկտիվությունն ու բարեխղճությունը,
4. հարգում է մասնագիտական պարտավորությունները և դադարեցնում է ծառայությունների մատուցումը միայն այն դեպքում, երբ առկա են արդար և հիմնավոր հիմքեր,
5. ժամանակին տեղեկացնում է համապատասխան կողմերին, երբ ուշանում է կամ չի կարողանում մատուցել ծառայությունը,
6. իրեն վերապահում է ծառայությունների մատուցումը մերժելու կամ դադարեցնելու հնարավորություն, երբ աշխատանքային պայմանները անվտանգ չեն կամ թարգմանելու համար նպաստավոր չեն,
7. գերծ է մնում ոտնձգություններից, հարկադրանքից կամ սպառնալիքներից թարգմանչական ծառայությունների մատուցումից առաջ, ընթացքում կամ հետո,
8. անվճար (pro-bono) ծառայությունները մատուցում է արդար և խելամիտ ձևով,
9. վճարովի ծառայությունները մատուցում է գրավոր պայմանագրերի հիման վրա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
10. վճարովի ծառայություններ մատուցելուց առաջ խելամիտ ժամկետում տեղեկացնում է օգտվողներին ծառայության պայմանները և արժեքը,
11. մինևույն աշխատանքի համար չի ստանում երկու և ավելի վարձատրություն,
12. չի պահանջում հավելյալ վճարներ օգտվողներից, երբ ծառայությունը մատուցվում է իր հիմնական աշխատանքային պայմանագրի շրջանակներում կամ երբ այդ ծառայության համար վճարում է այլ կազմակերպություն կամ անհատ,
13. գանձում է արդար և խելամիտ վճարներ թարգմանչական ծառայությունների կատարման համար և կազմակերպում է վճարումը պրոֆեսիոնալ և խելամիտ ձևով:

Սկզբունք 7 - Մասնագիտական զարգացում

Հիմնական սկզբունք - Թարգմանիչները զբաղվում են մասնագիտական զարգացմամբ:

Թարգմանիչներից ակնկալվում է, որ զարգացնեն և պահպանեն թարգմանչական կոմպետենցիաները և մասնագիտական մակարդակը՝ գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացման միջոցով:

Թարգմանիչը աշխատանքի ընդունվելիս պետք է համապատասխանի ըստ պահանջների համապատասխան կատեգորիաների՝ առաջին կատեգորիայի համար պետք է թարգմանիչը ունենա համապատասխան կրթություն և տիրապերի ժեստերին, երկրորդ կատեգորիայի թարգմանիչը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն և աշխատանքային ստաժ ոչ պակաս, քան երեք տարվա, երկրորդ կատեգորիայի թարգմանիչը պետք է ունենա միջին մասնագիտական կրթություն ոչ պակաս, քան հինգ տարվա ստաժով:

Թարգմանիչը՝

1. բարձրացնում է իր գիտելիքները և ամրապնդում դրանք այնպիսի միջոցառումների միջոցով, ինչպիսիք են՝
 - բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը,
 - մասնագիտական աշխատաժողովների և կոնֆերանսների մասնակցելը,
 - սուպերվիզիայի հնարավորությունների որոնումը,
 - խուլ անձանց համայնքային միջոցառումներին մասնակցությունը,
 - գիտական, հետազոտական գործունեությունը:
2. զարգացնում է հայերեն բանավոր խոսքը և հաղորդակցության կարողությունները,
3. զարգացնում է իր հետաքրքրությունների շրջանակում գտնվող ոլորտներում իր գիտելիքները, այդ թվում՝ նոր հասկացություններ սովորելը,
4. հետևում է օրենքներին և կանոնակարգերին, որոնք տարածվում են թարգմանչի գործունեության վրա,
5. հոգ է տանում իր հոգեկան և ֆիզիկական բարեկեցության մասին՝ աշխատունակությունը պահպանելու և աշխատանքի որակը ապահովելու համար:

«Հայաստանի Խուլերի Միավորում» ՀԿ
Ք. Երևան, Եզնիկ Կողբացի 69
Էլ. Փոստ՝ ada.armog@mail.ru
ada.armog@gmail.com

Հեռ.՝ +374 95 58 28 50
+374 10 53 10 00